ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊՐԵՏՈՐԻԱԿԱՆ ԹԻԿՆԱԶՈՐ
SPECIAL TOPIC: PRAETORIAN GUARD

Սկզբնապես «պրետորիական» տերմինը վերաբերում էր հռոմեական գեներալի վրանին (*“praetor”*), սակայն հռոմեական նվաճումների դարաշրջանից հետո այն սկսվեց կիրառվել վարչական նշանակությամբ՝ մատնանշելով քաղաքական, ռազմական վարչակազմի շտաբները կամ բնակատեղին (տես՝ Մատթ. 27:27, Հովհ. 18:28,33, 19:9, Գործք 23:35, Փիլ. 1:13):

Այդուհանդերձ առաջին դարի հռոմեական աշխարհում այն օգտագործվում էր սպայական կազմի համար, որոնք կազմում էին Կայսերական Թիկնազորը: Այս զինվորական էլիտար խումբը կազմվեց առաջին անգամ Օգոստինոսի կողմից (Ք.Ա. 27թ), սակայն վերջնականապես կենտրոնացվեց Հռոմում Տիբերիոսի կողմից: Նրանք՝

1. բոլորը միևնույն աստիճանի էին՝ հարյուրապետներ
2. ստանում էին կրկնակի աշխատավարձ
3. ունեին հատուկ արտոնություններ (այսինքն՝ թոշակի էին անցնում 16 տարի անց, 25 տարվա փոխարեն)
4. այնքան հզորացան, որ նրանց ընտրությունը Կայսեր համար միշտ էլ պատվի էր արժանանում

Նախքան Կոստանտինի օրերը այս էլիտար, քաղաքական հզոր խումբը վերջնականապես լուծարված չէր: